

Автор предлагает обогащение словарного запаса с помощью дидактических игр, методов группировки, обобщения, ассоциаций и других способов.

METHODS OF ENRICHING VOCABULARY

T. K. ALEKSANYAN

According to Russian psychologist Vigotsky, a word is a generalization, as well as a unit of communication and thinking. But followers of NLP /R. Dilts, M. A. Pavlova, I. Sakai/ see the word as a unit-symbol, which has great influence on the manifestation of human behavior and management.

Based on the foregoing, the author of this article offers new ways to enrich the vocabulary in the junior and secondary schools. The basis of perception of words and concepts put promotion of the visual /video/, auditory /audio/, and tactile, bodily /kinesthetic/ feeling.

The author proposes to enrich vocabulary with the help of educational games, group methods, generalization, associations and other methods.

ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՈՒՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՌԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Կ. ԽԱՆՈԱՆՅԱՆ
գՊՀ դասախոս

Որպես քերականական իրողություն՝ բառակապակցությունն ուսումնասիրվում է լեզվի շարահյուսություն բաժնում: Այն բառականաչափ լավ ուսումնասիրված լեզվական իրողություն է: Տարբեր լեզվաբաններ մեզ առաջարկում են բառակապակցությանը վերաբերող գրեթե նույնատիպ սահմանումներ և դասակարգումներ: Ս. Աբրահամյանը գտնում է, որ «բառակապակցությունը շարահյուսական բաղադրյալ միավոր է, որի բաղադրիչ բառերը պահպանում են իրենց բառային արժեքը և կապված են քերականական, բայց ոչ ստորոգման հարաբերությամբ»:¹

Ա. Պապոյանը և Խ. Բաղիկյանը մեզ առաջարկում են նմանատիպ սահմանում: «Երկու կամ ավելի լիիմաստ, ստորադասական հարաբերություն ունեցող, նախադասության մեջ մեկ ամդամի դեր կատարող, անվանական արժեք ունեցող բառախումբը կոչվում է բառակապակցություն»²:

Մինչդեռ Ռ. Իշխանյանը գրում է, որ «Բառակապակցություն է երկու կամ ավելի բառերի քերականական կապակցությունը, որն արտահայտում է մեկ հասկա-

¹ Ա. Աբրահամյան, Դայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 5:

² Կրտ. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 38:

ցություն և նախադասության արժեք չի ունենում»:³

Ն. Վիրաբյանը և Լ. Մարգարյանը իրենց «Շարահյուսություն» գրքում գրում են. «Բառակապակցությունը բառերից կազմված շարահյուսական բաղադրյալ միավոր է, որի բաղադրիչ բառերը միմյանց հետ կապված են քերականական հարաբերությամբ և պահպանում են իրենց բառային արժեքը»:⁴

Վերոհիշյալ հեղինակները տալիս են գրեթե նմանատիպ սահմանում և դասակարգում: Ըստ խոսքինասային պատկանելիության՝ բառակապակցությունները բաժանում են այսպիսի խմբերի՝ գոյականական, ածականական, թվականական, դերանվանական, մակրայական:

Ռ. Իշխանյանը, Ա. Պապոյանը և Խ. Բաղիկյանը առանձնացնում են նաև դերքայական բառակապակցություններ /3, էջ 42; 2, էջ 43/, իսկ Ս. Աբրահամյանը՝ բայական բառակապակցություններ /1, էջ 9/:

Բայական բառակապակցություններն են առաջարկում նաև Ն. Վիրաբյանը և Լ. Մարգարյանը /4, էջ 6/:

Իշխանյանն առանձնացնում է նաև կապային բառակապակցություններ /3, էջ 47/:

2009 թվականին իրատարակվել է Յ. Զաքարյան և Յու. Ավետիսյան հեղինակների «Հայոց լեզու. Շարահյուսություն» ծերնարկը՝ ուղղված բարձր դասարանների աշակերտներին և մանկավարժներին՝ ավարտական միասնական քննություններն ավելի բարձր մակարդակով կազմակերպելու համար: Այս գրքում գրված է. «Բառակապակցությունը լրացման /ստորադասական/ հարաբերությամբ միացած բառերի քերականական կապակցություն է /բացի դիմավոր բայի և դրա լրացման կապակցությունից/⁵.... Երբեմն բառակապակցություն է համարվում նաև կապը՝ իր կապի խնդրի /կապվող բառի/ հետ միասին. սեղանի վրա, ինձանից բացի, հանուն թեզ, առանց խուճապի»⁶:

Գոյականական բառակապակցության գրեթե անկրկնելի և յուրօրինակ մեկնաբանություն է տալիս Գ. Զահորկյանը: «Գոյականական բառակապակցությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բառերի այնպիսի կապակցություն, որի գլխավոր անդամը՝ գոյականը, լրացված է մեկ կամ մի քանի լիիմաստ բառով: Գոյականական բառակապակցությունը տարբերվում է վերլուծական գոյականական բառաձևից նրանով, որ վերջինս, բացի գոյականից, այլ լիիմաստ բառ չի պարունակում: Գոյականական բառակապակցությունը հանդես է գալիս որպես յուրատեսակ ծևակցություն /կոմֆիգուրացիա/, որ նախադասության կազմում ունի նույն գործառությունը, ինչ գոյականական առանձին բառաձևեր....»:⁷

Վերոհիշյալ սահմանումներից և դասակարգումների համեմատությունից նկատելի են որոշ նույն տարրերություններ: Այնուամենայնիվ, դասակարգման այս կամ այն մոտեցումները հավասարապես ընդունելի են և ավանդական:

³ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Երևան, 1986, էջ 41:

⁴ Ն. Վիրաբյան, Լ. Մարգարյան, Շարահյուսություն, Երևան, 2008, էջ 5:

⁵ Յ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Երևան, 2009, էջ 9:

⁶ Նույն տեղում, էջ 10:

⁷ Գ. Զահորկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 291:

Մեզ այս պահին հետաքրքրողը լեզվաբանների առաջարկած, բառակապակցություններին վերաբերող դասակարգումն ու վերլուծությունը չեն: Մեր նպատակն է դիտարկել գոյական որոշիչ ունեցող գոյականական բառակապացությունները, ցույց տալ, թե այստեղ որ խոսքի մասերը ինչպես են հանդես գալիս որոշիչ պաշտոնով և ինչպես է հանդես գալիս գոյական լրացյալը, երբ ունենում է տարրեր խոսքի մասերով արտահայտված որոշիչ լրացումներ:

Գոյականական բառակապակցություններում որպես գոյականի լրացում-որոշիչ հանդես են գալիս տարրեր խոսքի մասերը: Փորձենք դրանք ներկայացնել առանձին-առանձին:

Գոյականական որոշիչը քերականական կայուն ձև չունի և հանդես է գալիս գրեթե բոլոր հոլովածներով:

Ուղղական հոլովով գոյականական որոշիչներ. սրանք բառեր են, որոնք ընդգրկում են կյանքի տարրեր բնագավառները, ունեն իմաստային տարրեր դաշտեր և կիրառական տարատեսակ շերտեր: Ստորև փորձել ենք խմբավորված ներկայացնել կյանքի՝ մեզ ծանոթ գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկող բառերը, որոնք դառնում են գոյականի ուղղական հոլովով գոյական որոշիչ լրացումներ:

- Ազգակցական հարաբերություն արտահայտող բառեր. Հայր Մարդպետ, քույր Թերեզա, մայր Արաքս, քեռի Թորոս, հորեղբայր Մարգար, մորաքույր Սոնա, քավոր Սարգիս, խնամի Վարդան:

- Մարդկանց անուններ և ազգանուններ արտահայտող բառեր. Հրայր Աճառյան, Մանուկ Աբեղյան, Արարատ Ղարիբյան կամ Աճառյան Հրայր, Աբեղյան Մանուկ, Ղարիբյան Արարատ:

- Հարգանք, պատիվ արտահատող բառեր. սպարապետ Մարզպետունի, զորավար Անդրանիկ, պարոն Սուրեն, իշխան Գևորգ, օրիորդ Բովարի, դոկտոր Հարությունյան, պրոֆեսոր Սիմոնյան, տնօրեն Հովհակիմյան:

- Սասնագիտությունների անվանումներ ցույց տվող բառեր. բժիշկ Զոհրաբյան, իրավաբան Խորհրդատու, ձեռներեց Երիցյան, տնտեսագետ Խլդարյան, հաշվապահ Գարեյյան, երգիչ Ասատրյան, ֆուտբոլիստ Իշտոյան, նաղաշ Դավիթ, ներկարար Համլետ, տիեզերագնաց օդաչու:

- Տարրեր զբաղվածության հարաբերություն արտահայտող բառեր. մելիք Բարիսուդար, տեր Սարգիս, գուսան Շերամ, աշուղ Հավասի, վարպետ Մարգար, վարպետ տղա, բեռնակիր մարդ, ուսանող աղջիկ, բարեգործ սփյուռքահայ, թղթակից անդամ, վիպասան Ռաֆֆի, քննադատ Փափազյան:

- Անձնանիշ հասարակ անուններ ցույց տվող բառեր, որոնք ցույց են տալիս՝ ա/ տարիքային հարաբերություն. մանուկ հասակ, երիտասարդ դիմորդ, ծերունի վկա, պառավ հզերգիլ, թզուկ ջրաղաց, Դիլան դայի, Օհան ամի, Մարտ բիծա:

թ/ տեղային հարաբերություն. գյուղացի մարդ, քաղաքացի Վարդանյան, արտասահմանցի վկա, օտարերկրացի գրող, ճամփորդ մարդ, փախստական վկա.

գ/ սեռային հարաբերություն. աղջի Անուշ, տղա Արա, պարոն Ավագյան, տիկին Հայրյան, օրիորդ Շուշանիկ:

- Զինվորական կոչումներ և աստիճաններ ցույց տվող բառեր. գեներալ Մարգարյան, մայոր Խաչատրյան, գեներալ-մայոր Խանդանյան, մարշալ Բաղրամ-

յան, լեյտենանտ Ավագյան, սերժանտ Գրիգորյան:

- Քաղաքների և այլ բնակավայրերի անվանումներ ցույց տվող բառեր. կղզի Աղթամար, անապատ Սահարա, քաղաք Երևան, գյուղ Գեղարքունիք, մարզ Կոտայք, գավառ Տարոն, նահանգ Արդղոնա:
- Աշխարհագրական հատուկ անունների անվանումներ ցույց տվող բառեր. Երևան քաղաք, Արարատ լեռ, Մասիս սար, Ասիսա աշխարհամաս, Աֆրիկա մայրանք, Վիկտորիա ջրվեժ, Որոտան գետ, Արդղոնա նահանգ:
- Ազգային հարաբերություններ արտահայտող բառեր. հայ զինվոր, ռուս բարեկամ, լեհ ընկեր, գնչու երգիչ, թուրք ենիշերի, պարսիկ վաճառական, հնդիկ նախագահ:
- Բնության երևույթների և առարկաների անվանումներ ցույց տվող բառեր. ծով աչքեր /խելք/, կրակ աչքեր, հուր մազեր, խավար գիշեր, ցուրտ մշուշ, բոց հոգի, կայծակ Վաչո, անձրև արցունք, լուս փարոս:
- Կենդանական աշխարհի անվանումներ արտահայտող բառեր. Առյուծ Միեր, խոզ մարդ, ծուկ մարմին, Գայլ Վահան, Բազե Առաքել, Քուրկիկ Զալալի, քուռակ քանի, Գառնուկ ախաբեր:
- Բուսական աշխարհի անվանումներ արտահայտող բառեր. վարդ այստեր, կակաչ շուրթեր, ծաղիկ հասակ, մանուշակ աչքեր, ջլուտ Նորիկ, գլուր Նորիկ:
- Սննդի առարկաների, սննդամբերի անվանումներ ցույց տվող բառեր. կորեկ հաց, ցորեն լավաշ, մեղր այտեր, շաքար շուրթեր, գեյրուն աչքեր, մորի այտեր:
- Աշխատանքային գործիքների անվանումներ ցույց տվող բառեր. Կացին ախաբեր, Թուր Կեծակի, սղոց ատամներ, մկրատ լեզու:
- Համաստեղությունների անվանումներ, որոնք համադրված են «համաստեղություն» բառով. Կույս համաստեղություն, Առյուծ համաստեղություն, Կշեռք համաստեղություն, Խոյ համաստեղություն, Փյունիկ հավ համաստեղություն, Օրին համաստեղություն, Ցուլ համաստեղություն և այլն:
- Երկնային մարմինների և մոլորակների անվանումներ ցույց տվող բառեր. լուսին երես, արև աչքեր, «Երկիր Նահրի», արբանյակ «Դիսքավերի», արբանյակ «Ապոլլոն», Սիրիուս աստղ:
- Անսանունների և շաբաթվա որոշ օրերի անվանումներ. հունվար ամիս, փետրվար ամիս, մարտ-ապրիլ ամիսներ, ուրբաթ օր, շաբաթ օր:
- Տարվա եղանակների անվանումները. գարուն օրեր, Ամառ քույրիկ, Աշուն տատիկ, Զմեռ պապիկ:
- Նյութ ցույց տվող առարկաների անվանումներ արտահայտող բառեր. ոսկի մատանի, քար սիրտ, մարմար մարմին, արծաթ մազեր /խոսքեր, շողեր/, զմռուխտ դաշտեր, ալմաստ ջրեր, Աշոտ Երկաք:
- Գիտաբառեր և տերմինների անվանումներ. բիզնես-ծրագիր, բիզնես վարկ, քառակուսի արմատ, շոու բիզնես, ֆիզմաթ դպրոց, գոյական որոշիչ, ածական որոշիչ, գոյական որոշյալ, գոյական հատկացուցիչ, ածական որոշիչ:
- Արվեստի որոշ ճյուղերին վերաբերող բառեր. ջազ երաժշտություն, ռաբիս երգ, ռոք խումբ, ռեփ ժանր, փոփ աստղ:
- Կուսակցությունների, հասարակական տարրեր կազմակերպությունների, հիմնարկ ձեռնարկությունների անվանումներ արտահայտող բառեր. Դաշնակ-

ցություն կուսակցություն, ժառանգություն կուսակցություն, «Անելիք» բանկ, «Նահրի» կինոթատրոն, «Արարատ» հյուրանոց, «Էրեբունի» հիվանդանոց, «Դայստան» հանրախանութ, «Վանատուր» ռեստորան, «Գավառ կայան» ԲԲԸ:

• Որոշ բառեր, որոնք ունեն և գոյականական, և ածականական կիրառություններ. աղքատ մարդ, հարուստ տեր, որբ Երեխս, անօւրջ կույս, խենթ տագնապ, հիվանդ սիրտ, սուրբ հնչյուն, սրբազան մեղք, լուսնկա երազ, գերի կին, առողջ դատողություն:

• Մի շարք վերացական գոյականներ. իրաշք աղջիկ, ցնորք կյանք, մորմոք սիրտ, սեր կյանք, երազ հուշեր, կարոտ թախիծ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Արքահամյան**, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 2004:
2. **Յաքարյան**, Յու. Ավետիսյան, Շարահյուսություն, Երևան, 2009:
3. **Արտ. Պապոյան**, Խ. Բաղիկյան, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:
4. **Ռ. Իշխանյան**, Արդի հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Երևան, 1986:
5. **Գ. Զահուկյան**, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
6. **Ն. Վիրաբյան**, **L. Մարգարյան**, Շարահյուսություն, Երևան, 2008:

ВЫРАЖЕНИЕ СУБСТАНТИВНЫХ ОПРЕДЕЛЕНИЙ В ИМЕННЫХ СЛОВОСОЧЕТАНИЯХ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ. ОСОБЕННОСТИ СУБСТАНТИВНЫХ ОПРЕДЕЛЕНИЙ В ФОРМЕ ИМЕНИТЕЛЬНОГО ПАДЕЖА

C. K. XАНДАНЯН

В статье представлены определения и классификации разных лингвистов относительно словосочетаний, их схожести и различий.

Рассмотрены именные словосочетания, имеющие субстантивные определения в именительном падеже. Последние представлены определенными смысловыми группами, касающимися разных сфер жизни.

THE ATTRIBUTE EXPRESSED BY A NOUN IN NOUN PHRASES OF MODERN ARMENIAN LANGUAGE. FEATURES OF ATTRIBUTES EXPRESSED BY A NOUN IN THE NOMINATIVE CASE

S. K. KHANDANYAN

The article presents the attributes and their classification by different linguists. Here we mainly consider the noun phrases, with substantivized attributes in nominative case. The latter are represented by certain semantic groups that relate to different sectors and spheres of life.